



ՕՐԱԳԻՒՐ

ԵՐԱՅԻՆԻ, ԲԵԼԵՍԻՐԵԿԻ, ՏՆՏԵՍԻՆԻ

ԵԿ

ԲՆԱԿԻ, ԳԻՏԵԼԵՐՑ

Ե. ՏԱՐԻ, ԹԻՒ 17.

1847

ՄԵՊՏԵՄԲԵՐԻ 1.

ԲԱՐԱՑԱԿԱՆ

ՈՒԱԽԱՀԱՆ ԱՌԱԽԱՆՈՐ ԽՈՍՔԵՐ :

Դ'ԵՄԱՐԻՏ է ան խօսքը որ կ'ըսեն
թէ ազգի մը մէջ գործածուած ա-
ռակներն ու առակի պէս կարճ զուր-
ցուածքները իրեն բարոյականին հա-
մառօտութիւնը սեպելու է . ասով
կ'իմացուի թէ որչափ պատուական
աւանդներ ու յիշատակներ են այն-
պիսի խօսքերը, և որչափ աշխատան-
քով կ'արժէ որ հաւաքուին ու տը-
պուին : Հայաստանի մէջ ալ ինչուան
հիմա բիւրաւոր առակներ կան որ
հայերէն կը գործածուին, և մեր
հարց ու նախնեաց փորձառութեա-
նը արձագանգներն են . բայց բուն
հայաստանէն դուրս եղած հայոց
շատերը աս անգին յիշատակներն ալ
կորսրնցուցեր են, այնպէս որ թէ-
պէտ և խօսած լեզունին տաճկերէն
ալ ըըլլայ բոլորովին, ինչպէս ոմանցը,
բայց ան հայերէն սեպուած լեզուին
մէջ ալ առակ մը ըսել պէտք ըլլայ նէ՝
մէկէն 'ի մէկ տաճկերէնը կուգայ
մտքերնին, ու անիկայ մէջ կը բերեն՝
իրենց խօսքին հաստատութիւն կամ
զարդարնք տալու համար : Ա'.

ըենայ թէ այսպիսիները չեն գիտեր
որ Տաճկաց լեզուին մէջ գտնուած
բիւրաւոր առակներուն ու խելացի
խօսքերուն գոնէ մէկ մասը հայերէ-
նէն թարգմանած են տաճկերէն ա-
նոնք՝ որ իրենց լեզուն տաճկերէնին
հետ փոխեր են : Այս գիտնալով, թէ-
պէտ և դժուար բան է որոշելը թէ
արդեօք Տաճկաց որ առակը ատե-
նով հայերէն է եղեր, կամ թէ որը
հիմայ ալ հայերէն կը գործածուի
հայաստանի շատ կողմերը, բայց մէկ
կողմանէ սիրտ ընելու աշխատելու և
հաւաքելու է հայաստանցւոց առակ-
ները, մէկ կողմանէ ալ ջանալու է որ
մեր լեզուովը խօսելու ատեննիս տաճ-
կերէն առակ մըն ալ մտքերնիս գա-
լու ըլլայ նէ՝ հայերէն թարգմանենք
վայելուչ կերպով մը, թէ որ կրնանք,
ու այնպէս գործածենք :

Այս երկու տեսակ գեղեցիկ աշխա-
տանքներուն ալ մէյմէկ փոքրիկ ձա-
շակը տալ ու զելով, աս անգամ դնենք
հոս քանի մը առածներ ու առակներ
որ մօտերս խրկեց մեզի մեր ուսում-

նասէր թղթակիցներէն մէկը հայաս-
տանէն .

Եցել են առուտուր , և ոչ թէ առ
ու կուլ :

Աերկեիլը թուզ չիբերիլ , արջի ձա-
դը առիւծ չընիլ :

Ոչ ոք չի ասի թէ իւր ձրագը մին-
չե առաւօտը կը տայ լսու :

Շունը շանմէն , երկուսը մին տան-
մէն :

Շունը շան միսը չի ուտիլ :

Ի , ա մարդ չէ՝ տարտ է , ասուն չէ՝
անասուն է :

Ի ա բամբասանք չէ , բանասանք է :

Պլատիկ է , բայց չըստիկ է :

Վարը քարին քսես՝ կրակ դուրս
կը դայ :

Ոխոչուն կայ՝ միսը կ'ուտեն , թըռ-
չուն կայ՝ միս կ'ուտացնեն :

Ովչուստ՝ նա կուշտ :

Պանիր ու հաց , սիրտը բաց :

Խորեանք անիրաւ , խօսքերնին ի-
րաւ :

Բաղաւան կատուն մուկ չիբոնել :

Դառը գարնան , ձիւնը ձմռան :

Խուփը գլորուել ա , կճուճը գը-
տել ա :

Չար խօսացիր , չարչարուեցիր :

Գող , սրտումը դող :

Ինչ կը բրդես՝ էն կ'ուտես , ինչ
կ'ասես՝ էն կը լսես :

Կարասումը ինչ ձէն կը տաս , էն
կը լսես :

Գինի խմողը կ'արբի , կոիւ գնա-
ցողը կը մեռնի :

ԴԱՏԻՄԱԿՈՒԹԻՒՆ

Դրուեստական յիշողութիւն :

ՄԱՐԴԿԱՅԻՆ կատարելութեանց
մէջ հրաշալիներէն մէկն է յիշողու-
թիւնը . և թէպէտ դատմունքէն շատ
տարբերութիւն ունի , բայց պատուա-
կանութեամբը անկէ շատ վար չմնար :

Հիշողութիւնը հոգւոյ ան կարո-
ղութիւնն է , որով տեսած կամ լսած
կամ ուրիշ ինչ և իցէ զգայարանքով
ըմբռնած բաներնիս այնպէս կը տպա-
ւորուի մեր մտքին մէջ որ շատ ան-
գամ ուղենք ալնէ՝ չենք կրնար դուրս
ձգել . չմոռութիւնը կամ տեղեկու-
թիւնը գանձ է , յիշողութիւնը անոր
գանձարանն է . աս գանձարանս չու-
նեցողը՝ գանձէն ալ զուրկ կը մնայ .
և որուն գանձարանն որ խիստ պղտիկ
է , դիզած գանձն ալ քիչ կ'ըլլայ , և
կամ քիչը քովը կը մնայ . այսինքն երբ
որ մէկուն յիշողութիւնը քիչ կամ
տկար է , դժուարաւ բան կը սորվի ,
և սորված ու տեսած բաներն ալ շու-
տով կը մոռնայ : Արդ այսպիսի տկար
յիշողութիւնները սրելու համար ին-
չուան հիմա հնարք մը գտնուած չէ
արդեօք :

Հին ատենէն 'ի վեր խիստ շատ
փորձեր ըրեր են մարդիկ աս բանիս
վրայ . և թէպէտ միշտ պակասաւոր
եղած են իրենց գտած հնարքները ,
բայց մէկ հնարքով մէկալը աւելի
պայծառացեր է , որովուրիշարուեսու-
ներու պէս աս արտէստական յիշողութիւ-
նը կամ յիշողական արտէստին ալ շատ կա-
տարելագործուեր է , ու հիմա նոր
տեսակ ուսումնական դարձեր է որ գաղ-
ղիարէն տémoire artificielle և կամ
յունական բառով տémotechnie կ'ը-
սուի :

Կմյայտնի է որ թէ հին և թէ նոր
ատենները կարգէ դուրս յիշողութիւ-
նեցող մարդիկ շատ եղած են . բայց
ասոնց յիշողութիւնը աւելի բնական
է քան թէ արուեստական : Հին պատ-